

8035



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Տակոբ Սիմիոյան



«19» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 136 - 24

Նախաձեռնող՝

«ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Ռոստոմյան փ.9

Գործունեությունը՝

Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերևակման
տեղամասի 2024-2026թթ. ընթացքում երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքներ
Տավուշի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 136 - 24

«19» հուլիսի 2024թ.

**Տավուշի մարզի Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերակման տեղամասում
2024-2026 թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ**

Նախաձեռնող՝ «ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝ «Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Վազաշեն բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Գործունեության նպատակը հայցվող տարածքում առկա մետաղական օգտակար հանածոների պաշարների ուսումնասիրությունը, գնահատումը և դրանց հաստատումն է:

Նախատեսվող գործունեության տարածքի մի մասը պատկանում է Իջևան համայնքին (6.92400 հա), որի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ տարածքի մնացած մասը (194.1 հա) պատկանում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, որի հողերի նպատակային նշանակությունը՝ անտառային է:

Տվյալ տարածքում «ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից նախկինում՝ 2021-2023թթ. իրականացվել են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, նշված նախագծով ընկերությունը մտադիր է երկարաձգել ուսումնասիրության ժամկետները՝ 2024-2026 թթ: Ծրագրով նախատեսվում են նախկինում հանքերակման սահմանների, ինչպես նաև ծրագրավորվող աշխատանքների արդյունքներով ճշգրտել և լրացնել հանքերակման տարածքում առանձնացված հեռանկարային տեղամասերի երկրաբանական կառուցվածքի, հանքայնացված գոտիների և հանքերակների ձևաբանության ու տեղադրման տարրերի, օգտակար հանածոյի նյութական կազմի, որակի մասին տեղեկատվությունը՝ ինչպես նաև տալ առանձին տեղամասերի հեռանկարային գնահատականը: Երկրաբանահետախուզական և ուսումնաճանաչողական աշխատանքների ժամանակ հանքային մարմինները կուսումնասիրվեն մակերեսային փորվածքների և հորատանցքերի միջոցով, որի ընթացքում հետախուզական ցանցի խտացման միջոցով կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ C_1 և C_2 արդյունաբերական կարգով:

Նկարագրական մաս. Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերակման տեղամասը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի վարչական տարածքում՝ Վազաշեն բնակավայրից 1.5-4.0 կմ հարավ-արևելք և Հախում գյուղից 3.0-6.0 կմ հյուսիս-արևմուտք: Հանքերակման



տեղամասը գտնվում է 1000-1200մ բացարձակ բարձրությունների վրա և հյուսիսային հատվածում մոտ է ՀՀ պետական սահմանին (շուրջ 0.5-1 կմ): Մոտակա բնակավայրերի հետ երևակման տարածքը կապվում է Հ-37 հանրապետական նշանակության 42 կմ երկարությամբ ավտոճանապարհով: Երևակման տարածքում առանձնացվում է՝ Կարմիր քարի տեղամասը: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը սահմանափակվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ARMWGS-84 միասնական համակարգով).

N	X	Y
1	4538501	8527239
2	4539851	8525809
3	4540642	8526335
4	4540392	8526906
5	4539042	8527773

Երևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են ըստ Գրինվիչի
 - հյուսիսային լայնության - 45° 18.628'В
 - արևելյան երկայնության - 40° 59.619'С:

Ըստ հանքամարմինների ներքին կառուցվածքի, երևակման տարածքում առանձնացված են հանքայնացման երկու տիպեր՝ երակային և երակիկանցումային: Միներալների նստեցման հերթականությամբ՝ քվարց, պիրիտսֆալտրիտ-խավկոպիրիտ-գալենիտ-կարբոնատներ: Ոսկին ներկայացված է բնածին ձևով, այն գտնվում է ինչպես երակային, այնպես էլ հանքային միներալներում:

Տարածքը թփուտապատ է, սակայն մակերեսային երկրաբանահետախուզական փորվածքները փորվելու են անտառազուրկ տարածքներում, որտեղ մերկանում են հանքային մարմինները, իսկ հետախուզական հորատանցքերի համար հարթակներ նախատեսված է կառուցել նույնպես անտառազուրկ տարածքներում՝ օգտագործելով գոյություն ունեցող ավտոճանապարհները: Հետախուզափորվածքների համար տեղանքի տարբերակների այլընտրանքների վերլուծություն չի կատարվել, քանի որ հետախուզական փորվածքները տեղադրվել են որոշակի ցանցով, որը այլընտրանքի ենթակա չէ:

Կազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերևակման շրջանում զարգացած են մարգագետնա-տափաստանային և անտառային գորշ և դարչնագույն, ինչպես նաև գետհովիտներում դարավանդային հողերը: Մարգագետնա-տափաստանային սևահողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, երբեմն՝ 18%) : Ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, այստեղ դրանք հիմնականում հզոր են կամ ունեն միջին հզորություն: Անտառ կազմող գլխավոր ծառատեսակներն են՝ արևելյան հաճարենին, արևելյան և վրացական կաղնին, բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են՝ դաժին, լորին, հացին, սրատերև և դաշտային թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր փոքր ծառուտներ: Բուն տարածքում գերակշռող լանդշաֆտը ներկայացված է ենթալայան մարգագետիններով: Կենդանական աշխարհը ներկայացված է բնորոշ տեսակներով, հանդիպում են այծյամներ, գորշ արջ, վայրի խոզ, գայլ, աղվես, փորսուղ, նապաստակ, կզաքիս, շնագայլ, ոզնի, սկյուռ,



անտառային կատու, դաշտամուկ, սողունների, երկկենցաղների, թռչունների, միջատների և բզեզների տեսակներ:

Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերակման մերձակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Բնության հատուկ պահպանվող տարածքներից նախատեսվող գործունեության վայրին ամենամոտը «Զիկատար» պետական արգելավայրն է՝ 20 կմ:

Հանքային գոտիների բացման, ալուվիալ-դելուվիալ նստվածքների ուսումնասիրման, հանքային մարմինների, երակների ու գոտիների հզորությունը, տարալուծումը, դրանց հանքայնացման համասեռությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները ճշտելու, ինչպես նաև նմուշարկման, մարմինների մորֆոլոգիան պարզելու համար նախատեսվում է վերգետնյա լեռնային՝ փորվածքների (հետախուզաառուների) անցում: Քանի որ տեղամասերում ըստ նախնական ուսումնասիրության ալուվիալ-դելուվիալ, փուխր բեկորային, ճեղքավորված, ապարների հզորությունը տատանվում է 0.4-8 մետր սահմաններում, իսկ տեղ-տեղ է մինչև 10 մետր, ուստի հետախուզափորվածքների անցումը՝ IV-VIII կարգի ամրության ապարներով նախատեսվում է իրականացնել ձեռքի աշխատանքի օգնությամբ: Նախագծով նախատեսվում է հետախուզաառուների անցում, որոնց խորությունը ընդունվել է մինչև 2 մետր, լայնությունը 1 մետր և ընդամենը 100 գծամետր երկարությամբ: Հետախուզաառուները՝ նախատեսվում է անցնել հիմնականում հանքայնացված գոտիների և մարմինների տարածման ուղղահայաց ուղղությամբ: Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերակման տարածքում ընկերությունը՝ նախատեսում է անցնել մոտ 100 գծամետր ընդհանուր երկարությամբ հետախուզառու: Նմուշարկումը կատարվելու է ակոսային եղանակով 5x10x100 սմ հատույթով: Ընդհանուր նմուշների քանակը՝ 100: Ծրագրով նախատեսվում է հորատել 15 հատ, մինչև 2000 գծամետր հորատանցքեր: Հորատանցքերի միջին խորությունը կկազմի 135 մետր: Նախատեսված է հորատման աշխատանքները կատարել 15 հորատահրապարակներում, կհորատվի տարբեր ազիմուտներով և անկյուններով:

Էրոզիան կանխարգելելու նպատակով ճանապարհների եզրերը կդարավանդավորվեն: Այն կանխում է հողերի տեղատարումը և կարգավորում հողաշերտում ջրաջերմային ռեժիմը, նպաստում բույսերի նորմալ աճին:

Տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամանակ հնարավոր է ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումներ, որոնց նվազեցման համար կիրականացվի մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգում, իսկ շարժիչի աշխատանքը կարգավորելու համար արտանետման խողովակի (խլացուցիչի) վրա կտեղադրվի լրացուցիչ օդազտիչ: Վառելիքի և նավթամթերքների պահման համար պահեստ չի նախատեսվում, լիցքավորումը կկատարվի բաքերով ներկրման միջոցով, միանգամյա լիցքավորմամբ: Օգտագործված յուղերից, վառելիքից, հորատման ժամանակ օգտագործվող պոլիմերային լուծույթից հողերի հնարավոր աղտոտումը կանխելու նպատակով դրանք կկուտակվեն ոչ թափանցիկ տակառներում՝ մեկուսացված հարթակների վրա: Աշխատանքների ավարտից հետո դրանք տեղափոխվելու են ընկերության արտադրական տարածք և այնուհետև հանձնվելու են քսայուղերի ու նավթամթերքների հավաքման կետ: Աղտոտման ընթացքը վերահսկելու համար կատարվելու են հողերի նմուշառում: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է մակերեսային լեռնային փորվածքների և հորատման հարթակների ամբողջական ռեկուլտիվացիա՝ 3850 մ² ընդհանուր ծավալով: Դրա համար կկատարվի փորվածքների հետլցնում և հարթեցում, որից հետո կփոփի հողի նախապես պահեստավորված բերրի շերտը: Սողանքային երկույթների



հնարավոր զարգացումների դեպքում առանձնահատուկ հետևողականություն է ցուցաբերվելու նրանց ուսումնասիրության և հակասողանքային կանխարգելիչ միջոցառումների մշակման ուղղությամբ: Բացառվելու է անտառային ծածկի ծառերի, թփերի հատման հնարավորությունը: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում Ընկերությունը հիմնավորապես օգտագործելու է նախկինում կառուցված անտառադաշտամիջյան ճանապարհները, հորատման հարթակներն ու լեռնային փորվածքները: Անհրաժեշտության դեպքում, վերագործարկման նպատակով, կկատարվի հների վերանորոգում, իսկ խիստ հարկադիր դեպքերում, սահմանափակ ծավալներով նորերի կառուցում՝ համընթաց ապահովելով բնապահպանական միջոցառումները:

Տեղամասում նախկինում բացվել են 39 հետախուզաառուներ՝ ընդհանուր 750 գծամետր երկարությամբ և մոտ 150 մ³ ծավալով, ինչպես նաև մաքրվել և նմուշառվել են նախկինում փորված հետախուզահորերը՝ 20 հատ: Հետախուզահորերը անցել են հետախուզաառուներից և վերցվել են 20 նմուշ: Իրականացվել է նախկինում բացված լեռնային ճանապարհների և հորատահրապարակների մաքրում: Ընդհանուր առմամբ մաքրվել և վերաբացվել են 4.2 կմ լեռնային ճանապարհ և թվով 18 հորատահրապարակ: Վազաշենի հանքերակման տեղամասում երկրաբանահետախուզական նպատակով անցկացված բոլոր հետախուզաառուներում և հետախուզահորերում իրականացվել են առուների և փոսերի հետլցման աշխատանքներ: Նմուշառումից հետո փակվել և ռեաբիլիտացիայի են ենթարկվել բոլոր հետախուզաառուները և հետախուզահորերը՝ ընդհանուր 700 մ³ ծավալով:

Եզրափակիչ մաս. Հանրային ծանուցումը իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով. քննարկումները կատարվել են Տավուշի մարզի Իջևան համայնքի Վազաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Երկրորդ հանրային քննարկման ժամանակ համայնքի բնակիչների, շահագրգիռ հանրության կողմից արձանագրվել են և դրական և բացասական կարծիքներ: Համայնքի ղեկավարի և գերակշռող համայնքի բնակիչների կողմից իրականացվելիք ծրագրին տրվել է դրական համաձայնություն:

Փորձաքննական ամբողջ գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, պաշտպանության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Տավուշի մարզպետի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Նախագծի վերաբերյալ ստացվել են բացասական կարծիքներ ՀՀ պաշտպանության նախարարության և ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից:

«ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրենը 2024 թվականի մարտի 26-ի N°05/24 գրությամբ դիմել է պաշտպանության նախարարությանը և հստակեցրել ընկերության կողմից իրականացվող աշխատանքների տեխնոլոգիան:

Հաշվի առնելով, որ ընկերության կողմից կիրառվելու է ստորգետնյա երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդը, որի արդյունքում նոր ճանապարհներ չեն կառուցվելու և գոյություն ունեցող ճանապարհները չեն վնասվելու, ինչպես նաև ՀՀ պետական դիրքեր բարձրացող գրունտային ճանապարհի փլուզումները բացառվելու են՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հաջորդիվ ներկայացրել է **դրական** կարծիք կատարվելիք աշխատանքների վերաբերյալ :



ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Ընկերության միջև նախկինում կազմված է եղել վարձակալական պայմանագիր նշված տարածքներում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար, որը ժամկետանց է համարվում և 2024-2026 թթ-ի ընթացքում իրականացվելիք աշխատանքների համար և կիրառելի չէ:

Փորձաքննական պրոցեսի ընթացքում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների միջև, որի արդյունքում ստացվել է ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի դրական կարծիքը կատարվելիք աշխատանքների վերաբերյալ՝ նոր պայմանագիր կազմելու հիմքով:

Բոլոր ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակված տարբերակներում:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Հետազոտվող շրջանում իրականացնել հիդրոերկրաբանական լրացուցիչ աշխատանքներ, որոնց նպատակը կլինի ճշտել հանքային դաշտում առկա սողանքային մարմինների տարածական չափերը և հակասողանքային միջոցառումների ծրագրի իրականացումը:
- Բացառել հանքերևակման տարածքում նոր ճանապարհների կառուցումը և գոյություն ունեցողների վնասումը:
- Աշխատանքներն իրականացնել բացառապես ներկայացված ծրագրին համապատասխան և չխոչընդոտել ՀՀ մարտական դիրքեր բարձրացող գրունտային ավտոճանապարհի բնականոն ընթացքին:
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ կազմել համապատասխան վարձակալական պայմանագիր նշված տարածքներում երկրաբանական ուսումնասիրման աշխատանքներն շարունակելու համար:
- Չխոչընդոտել Կառավարության 22 ապրիլի 2021 թվականի N 610-Լ որոշմամբ՝ Փարիզյան համաձայնագրի Հայաստանի Հանրապետության 2021-2030 թթ. Ազգային մակարդակով սահմանված անտառապատման և անտառվերականգնման աշխատանքներին:
- Աշխատանքների ընթացքում բացառել որևէ ծառատեսակի հատում կամ վնասումը:
- Հողի բերրի շերտի հետ կապված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել Կառավարության 02.11.2017 թվականի N 1404-Ն և Կառավարության 08.09.2011 թվականի N 1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան:
- Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նաև նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նպատակային ու գործառնականությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ պահպանել Կառավարության 14.12.2017թ.-ի N1643-Ն որոշումը:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար ներկայացված ծրագիրը և համապատասխան սույն եզրակացությունը չի կարող հիմք հանդիսանալ հետագայում Ընկերության կողմից ներկայացվող արդյունառնական ծրագրի



փորձաքննական դրական հանգուցալուծմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերակման տեղամասում 2024-2026թթ ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված պայմանների պարտադիր կատարման պահանջով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Շուշանիկ Կարապետյան